գՍիւնաց[ւ]ոց[1] աշխարհն: 299 Կոչի անդ գաւառ մի՝ Ոսկի, եւ գաւառ մի՝ Արծաթի: 300 Եւ ի թագաւորանիստ նոցա լինի կորանգ, ս[36ա]ա[2]՝ ե՛ւ պապկաս սպիտակն[3], ե՛ւ աքաղաղս փետրամուրուս: 301 Եւ երկու[4] գաւառք այլ են, զոր կոչեն Ոսկի եւ Արծաթի, եւ մի՝ Պղնձի գաւառ: 302 Եւ լինին եւ փե[ւ]ղք[5] եւ վագերք **[եւ կորեանք, եւ վիշապ]**[6], զոր ասեն՝ դիւթութեամբ հնազանդեն ի լուծ, որ երագ են որպէս հողմածինս: 303 Լինի պպել[7] եւ ռռոմտոց[8], որ է բո[յ]աճառս, ախիրիբո-յե[ա]կ[9], գոզիբոյե[ա]կ, ագո[յ]իբոյեակ[10], կասիմոն, դ[ո]ւաղակ[11], շահաւոր մարգակոշակ[12], հալ[ո]ւա[յ][13], փաղանգմուշկ[14], կափուր, ճանդան, նա[յ]իբոյեակ[15], եւ բազում դեղք եւ բաժարք[16]: 304 Եւ՝ մկունք, որ կոչին բէշմո[ւ]շկ[17], որ յաղագս բիշ մահացու արմատ ուտելո[յ]՝ լինի անդեղեայք, եւ մեծ մրջմունք՝ ուր ոսկի փոշիքն լինին: 305 Լինի անդ գազան՝ **[նման առիւծու, բայց կնճիթն սուր եւ երկայն, եւ կորկորդիլ գազան, որ է մեծ գազան]**[18] շաւարշան[19], որ լեզուաւն զփե[ւ]ղ[20] սպանանէ, եւ բառնա[յ] ի ճանկն, զոր յողինն ունի, եւ գնա[յ], զորո[յ][21] զգոչիւն լսեն ամենայն չորքոտանիք եւ արիւն մզեն: 306 Լինի եւ միեղջերու եւ գա[յ] պասկուճ ի Սիւնաց[ւ]ոցն[22] անդ, զոր բեռամբ սայլի եւ երկաթեղէն գառագղիւ սպանանեն: 307 Եւ զվ[ա]գրէ[23] ասեն, թէ վազէ ի պասկուճն, եւ առ ի չժուժալն՝ անկանին երկոքեանն[24] ի ծովն եւ հեղձնուն: 308 Եւ ասեն՝ անդ վայրենի[25] ազգ մարդկան՝ կաշիացեալ խարատեալ[26], որ նետիւ[27] [36բ] ոչ

---

1 VS գՍիւնացոց փխ գՍիւնաց[ւ]ոց (վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)

2 S կորանգսա փխ կորանգ, սա (V. Սուքրեանի ծանօթագրութիւնն է. «Այսինքն՝ ագռաւք»)

3 S սպիտակ փխ սպիտակն (V)

4 V բ̅

5 VS փեղք փխ փե[ւ]ղք (վեր.՝ ըստ նախորդի՝ նախ. Դ.34՝ «զփիւղ». փեղք է նաեւ նախ. Դ.40, Ե.305)

6 VS չիք եւ կորեանք, եւ վիշապ (վեր.՝ ըստ համառօտի, տե՛ս նախ. Ե.293-ի ծնթ.)

7 Գրիչը երկու պ-երի միջեւ ինչ-որ տառ է մաքրել (գուցէ եւ՝ ղ-ն). համառօտում պղպեղ եւ պղպիղ է

8 Գրիչը նախորդ և-ին կից գրել է ոռ, ապա մաքրել՝ թերեւս, անծանօթ ռռոմտոց-ը բաժան գրելու համար. համառօտում սնգրուիղ, սնգրուէղ է, որը V-ում ստորեւ է. Սուքրեանի իրաւացի ծնթ.-նն է՝ «Խանգարեալ երեւի բառդ, իսկ առաջինն՝ պղպեղ»

9 VS բոաճառս, ախիրիբոյեկ փխ բո[յ]աճառս, ախիրիբոյե[ա]կ (վեր., համառօտում առաջինը՝ բովիճայք (DPv), բովոճայք (AE) եւ բովաճառք (v²) ձեւերով է (ըստ ՀԱԲ, Ա, էջ 474՝ = «խնկեղէն»). երկրորդի եւ յաջորդի ե[ա]-ն՝ ըստ յաջորդների (պհլ. bōyāk = «անուշահոտ»). համառօտը դրանք տալիս է հիրիբոակ, գոզիբոակ կամ հրբուակ, գազերբուակ ձեւերով)

10 VS ագսիբոյեակ [ս տառի վրայ գրչի դրած ուղղման կայծակնաձեւ նշանով] փխ ագո[յ]իբոյեակ (վեր.՝ համադրելով համառօտի հետ, ուր գոյիբոակ կամ գոյիբուակ է. տե՛ս բոլորագիր ո → ս)

11 V դւաղակ, S դըւաղակ փխ դ[ո]ւաղակ (վեր. (ըստ Աճառեանի, ՀԱԲ, Ա, էջ 583՝ = «մի տեսակ խնկեղէն)». համառօտում գովաղակ կամ գովողակ է. տե՛ս բոլորագիր դ → գ)

12 VS շահաւորսար, քակողակ փխ շահաւոր մարգակոշակ (վեր.՝ համադրելով համառօտի տարբերակները՝ շահաւարմար, դարիշակ կամ շահաւոր, մարգաշիդա. տե՛ս ուշ երկաթագիր **Մ** → **Ս**, բարբառային **Գ** → **Ք** եւ բոլորագիր շ → ղ)

13 VS հալւա փխ հալ[ո]ւա[յ] (վեր.՝ ըստ յաջորդի, տե՛ս նախ. Ե.312. համառօտում հալուէ է)

14 S փաղանգամուշկ փխ փաղանգմուշկ (V. համառօտում փաղանգամուշկ է, յաջորդը՝ քափուր)

15 V նաիբոյեակ փխ նայիբոյեակ (վեր. Սուքրեանի. համառօտում նայիբոակ եւ նայիբուակ է)

16 Գուցէ, վերականգնելի է բուժարք փխն. բաժարք (համառօտում «դեղք բժշկականք» է)

17 VS բէշմաշկ փխ բէշմո[ւ]շկ (վեր., հմմտ. նախորդի՝ փաղանգմուշկ, եւ ստորեւ՝ մ[ու]շկերէ)

18 VS չիք նման առիւծու ... գազան (2 տող) (վեր.՝ ըստ համառօտի, տե՛ս նախ. 293-ի ծնթ., հմմտ. **գազան ... գազան**)

19 Տողից («ուր ոսկի ... գազան շաւար/շան») աջ, լուսանցքում նկարուած է ծանօթ ոլորազարդը

20 VS զփեղ փխ զփե[ւ]ղ (վեր.՝ ըստ նախորդի՝ նախ. Դ.34՝ «զփիւղ». փեղ է նաեւ նախ. Դ.40, Ե.302)

21 V զորո, S զորոց փխ զորո[յ] (վեր.)

22 VS գՍիւնացոցն փխ գՍիւնաց[ւ]ոցն (վեր.՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)

23 V զփգրէ, S զփագրէ փխ զվ[ա]գրէ (վեր., տե՛ս բոլորագիր **փ**գրէ → **վա**գրէ)

24 V երքոքեանն փխ երկոքեանն (վեր. Սուքրեանի. տե՛ս բանաւոր ...կոք → ...քոք)

25 V վայրայնի [այ-ի վրայ գրչի դրած կայծակնաձեւ նշանով] փխ վայրենի (վեր. Սուքրեանի)

26 S խտրատեալ փխ խարատեալ (V)

27 V նեղիւ [ղ-ի վրայ գրչի դրած ուղղման կայծակնաձեւ նշանով] փխ նետիւ (վեր. Սուքրեանի)